

### ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Դատախազության դպրոցի տնօրեն,  
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի քրեական և քրեական դատավարության իրավունքի  
ամբիոնի հայցորդ

## ԿԱՇԱՌՔԻ ՇՈՐԹՄԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոռուպցիոն բնույթի առավել վտանգավոր դրսևորումների շարքին է դասվում կաշառքի շորթումը: Այս հանցակազմը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու հատկապես որակյալ ձև: Առաջին հերթին պարզ թվացող այս դրույթը իրականում խնդրահարույց է: Նշենք, որ կաշառքի շորթման դեպքերով պրակտիկան ձևավորվել է դեռևս խորհրդային ժամանակներից, և դատարանները արարքը որակելիս հիմնվում են ՌԴ դատական պրակտիկայի և ռուսական քրեական իրավունքի մեկնաբանությունների վրա: Նշված մոտեցումն արդեն ավանդույթ է ձևավորել և, կարծում եմ, կաշառքի շորթման դեպքերի բացահայտման սակավությունը հիմք չի ապահովում վճռաբեկ դատարանների համար համապատասխան նախադեպ ստեղծելու հարցում:

Կաշառքի շորթման վերաբերյալ Յարական Ռուսաստանի և Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մոտեցումները տարբեր են այն տեսանկյունից, որ առաջինի դեպքում կաշառքի շորթումն առանձնացված էր որպես ինքնուրույն հանցագործություն և դրսևորվում էր «ֆիզիկական և բարոյական բռնության»<sup>1</sup>, որը կիրառվել է պաշտոնատար անձի կողմից օգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ տուժողից ապօրինաբար դրամ կամ այլ գույք ստանալու համար<sup>1</sup>: Այստեղ հատկանշական է «տուժող» եզրույթը, դրա իրավաբանական նշանակության տեսանկյունից, այն, որ կաշառքի շորթման դեպքում, պաշտոնատար անձին, նրա ապօրինաբար պահանջի արդյունքում դրամ կամ այլ գույք տրամադրող անձը ոչ թե դիտվում է որպես կաշառատու՝ այլ անձ, որին հանցագործությամբ վնաս է պատճառվել, տվյալ դեպքում՝ գույքային:

Ինչևէ, մինչ կաշառքի շորթման հասկացության վերաբերյալ բովանդակային հետազոտություն անցկացնելը, հարկ ենք համարում ներկա-

յացնել ՀՀ ներկա քրեական օրենսդրությունը՝ կաշառքի շորթման հասկացության համատեքստում: Նկատենք, որ խնդրո առարկա հարցը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իրավաչափության սահմաններում դիտարկելիս, առաջանում են հակասություններ՝ կաշառքի շորթման հասկացության, արարքի որակման և օրենքի կիրառման հարցերում: Մասնավորապես, առաջին հերթին հարկ է նշել, որ «կաշառքի շորթում» հասկացությունը քրեական օրենքում տրված չէ:

ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը սահմանում է քրեական պատասխանատվություն կաշառքի ստացման համար, որը կատարվել է շորթմամբ: Այստեղից հարց է ծագում, թե ի՞նչ է նշանակում «շորթում»: Այս հարցը վճռաբեկ դատարանը նույնպես չի պարզաբանել: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Նշվածը հիմք ընդունելով՝ պետք է փաստենք, որ քրեական օրենքը սահմանում է շորթման հասկացություն 182-րդ հոդվածում. «Շորթումը՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը»: Վերը հիշատակված օրենքի կանոնների համաձայն՝ շորթման մասին ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված դրույթը, տառա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

ցի մեկնաբանությամբ, պետք է կիրառվի նաև կաշառքի շորթման դեպքում, որը, բնականաբար, հնարավոր չէ՝ իրական հասկացությունների որոշ բովանդակային տարբերությունները հաշվի առնելով:

Նախ, գիտական հետազոտություն կատարելով, փորձենք վեր հանել նշյալ հարցի վերաբերյալ համընդհանուր ընդունելի մոտեցումները: Այսպես, կաշառքի շորթումը նշանակում է պաշտոնատար անձի կողմից դրա ստացում այնպիսի իրավիճակում, երբ նա իր գործողություններով «կաշառատուի» օրենքով պահպանվող շահերը դրել է վտանգի տակ ստիպելով նրան այդ կապակցությամբ կաշառք տալ: ՌԴ գերագույն դատարանի պլենումի 2000 թվականի փետրվարի 10-ի որոշման 15-րդ կետի համաձայն. «շորթում նշանակում է պաշտոնատար անձի կողմից կաշառքի պահանջ, որը կատարվել է այնպիսի գործողություններ կատարելու սպառնալիքով, որոնք կարող են վնաս պատճառել կաշառատուի օրինական շահերին, կամ վերջինիս նկատմամբ այնպիսի պայմաններ դնել, որի պարագայում նա ստիպված է կաշառք տալ իր օրենքով պահպանվող շահերի համար վտանգավոր հետևանքների առաջացումը կանխելու նպատակով»:

*Ա-ն, աշխատելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունում որպես քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազոր, 2008թ. դեկտեմբերի 17-ին, շինծու վրաերթի դեպքի կապակցությամբ ճանաչման ներկայացնելու պատրվակով, վարչություն բերման է ենթարկել քաղաքացիներ Կ-ին և Մ-ին: Այնուհետև, Լ-ին և Հ-ին, նախորդ օրը Աբովյան քաղաքի «Ղարս» ռեստորանային համալիրում բռնաբարելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու և քրեական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքով, նրանցից պահանջել է 3000 ԱՄՆ դոլար կաշառք, սակայն սակարկելու արդյունքում համաձայնության եկել 1500 ԱՄՆ դոլարի շուրջ՝ Կ-ին և Մ-ին ազատ արձակելու դիմաց: Ավելի ուշ ստացել է գումարը, իսկ հետագայում բռնվել իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից:*

*Ա-ն մեղավոր է ճանաչվել, դատարանի կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ<sup>2</sup>:*

Այսպիսով, ելնելով վերը նշված ձևակերպումից և պրակտիկայից՝ կարելի է առանձնացնել պաշտոնատար անձի կողմից կաշառքի շորթման երկու եղանակ.

1. կաշառք տալու ուղղակի պահանջ, որը

միաժամանակ զուգորդված է կաշառատուի օրինական շահերին և իրավունքներին վնաս պատճառելու պաշտոնատար անձի սպառնալիքներով՝ գործողությամբ կամ անգործությամբ: Որպես այլ օրինակ կարող է ծառայել աշխատանքից չհիմնավորված հեռացման սպառնալիքով կամ համապատասխան պաշտոնին նշանակման բոլոր պայմանների առկայության դեպքում աշխատանքի չընդունմամբ կաշառքի պահանջը և այլն: Ինչպես տեսնում ենք, պրակտիկայում հաճախ հանդիպում են կաշառքի պահանջի դեպքեր՝ անհիմն քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքով:

2. կառաքի շորթման մյուս եղանակին բնութագրական է այն, որ չնայած այստեղ բացակայում է կաշառքի ուղղակի պահանջը, սակայն պաշտոնատար անձը կաշառատուին դնում է այնպիսի վիճակում կամ նրան առաջադրում է այնպիսի պայմաններ, որի պարագայում անձը ստիպված է կաշառք տալ, որպեսզի խուսափի իր օրինական շահերի խախտումից: (Օրինակ՝ տուժողի համար շատ կարևոր հարցերի լուծման դիտավորյալ անհարկի ձգձգման դեպքերը (իրավունք վերապահող փաստաթղթի տրամադրում, գրանցում, աշխատանք և այլն)):

Գործնականում կարծիք է ձևավորվել, որ չպետք է պաշտոնատար անձի կաշառք տալու պահանջը գնահատվի որպես շորթում, եթե զուգորդվել է կաշառատուի նկատմամբ օրինական գործողություններ կատարելու սպառնալիքով: Այս մոտեցումն իրավացի չի կարելի համարել, քանի որ օրենքում նշվում է պաշտոնատար անձի, թե օրինական, և թե անօրինական գործողությունների մասին:

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, որ պաշտոնատար անձը կաշառք է պահանջում թվացյալ օրինական գործողություններ կատարելու սպառնալիքով, բայց, ըստ էության, դրանք հենց շորթում են իրենցից ներկայացնում: Այդպիսի դեպքեր բավականին շատ տեղի են ունենում, երբ պաշտոնատար անձին տրված է հայեցողական գնահատման իրավասություն, այսինքն նշյալ իրավասությունների շրջանակում կարող է կայացնել այս կամ այն որոշումը, որը փաստացի օրինական կիսմարվի, բայց բովանդակային առումով կարող է հակասել օրինական շահերին այն անձի, որից կաշառք է պահանջվել: Առաջին հերթին ասվածը վերաբերում է դատավորներին: Իրենց իրավասությունների ուժով, դատավորը, օրենքին համապատասխան բոլոր հանգամանքները վեր հանելով, օրինակ՝ քրեական կամ վարչական իրավա-

www.lawinstitute.am

խախտման վերաբերյալ գործով ապացուցված համարելով անձի մեղավորությունը համապատասխան իրավախախտման կատարման մեջ կարող է իր հայեցողությամբ ներքին համոզմունքի հիման վրա կոնկրետ պատժամիջոց սահմանել քննարկվող հոդվածի սանկցիայի շրջանակում: Հիմք ընդունելով այն, որ միևնույն հանգամանքների պարագայում, երբ դատավորը, սպառնալով խիստ պատիժ նշանակել, կաշառք է պահանջում՝ խոստանալով այն մեղմացնել, ապա ենթադրվում է, որ նրա արարքում առկա է շորթման հանցակազմը: Նույն բանը կարելի է ասել այլ պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնց օրենքը վերապահել է հայեցողական գնահատման իրավասություն:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կաշառքի շորթման հանցանշանի առկայությունը որոշելու համար, առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե կարո՞ղ են արդյոք պաշտոնատար անձի գործողությունները կամ անգործությունը վնաս պատճառել կաշառատուի օրենքով պահպանվող շահերին:

ՀՀ *նստիկանության Նոր Նորքի նստիկանության բաժնի օպերիվազոր՝ Հ-ն, 2009 թվականի հուլիսի 2-ին բաժնի բերման ենթարկված Ռուսաստանի Դաշնության Կիսլավոդսկ քաղաքում ՌԴ քր. օր-ի 159-րդ հոդվածի 2-րդ մասով հետախուզման մեջ գտնվող Կ-ից, ՌԴ իրավապահ մարմինների կողմից նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի՝ ստորագրություն չհեռանալու մասին, պայմաններում, որի փաստը թաքուն պահելով, նրան կալանավորելու սպառնալիքով, պահանջել է խոշոր չափերով՝ 360.270 ՀՀ դրամին համարժեք 1.000 ԱՄՆ դոլար կաշառք:*

Կ-ն, պահանջվող գումարի կեսը վճարելով, մյուս կեսի համար պայմանավորվածություն է ձեռք բերել վճարել մեկ ամսվա ընթացքում: Այնուհետև, չկարողանալով հայթայթել պահանջվող գումարը՝ դեպքի մասին հայտնել է իրավապահ մարմիններին:

Հ-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքի կատարման մեջ:

Կարծում ենք, որ դատարանի կողմից արաքի որակումը միանշանակ չի կարելի ընդունել: Անվիճելի այն է, որ Հ-ի արարքում շորթման հատկանիշներ կան, սակայն արդյո՞ք Կ-ի կալանավորման հարցը մտնում է նրա լիազորությունների շրջանակի մեջ կամ նա իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կարող էր նպաստել: Չէ՞ որ Կ-ի վերաբերյալ գործը Հ-ի վարույթում չի եղել, առավել ևս, եթե, տվյալ գործե-

րով առաջնայինը՝ էքստրադիցիայի հարցի լուծումն է: Մյուս կողմից, ինչպես երևում է դատավճռից, Կ-ն չի իմացել, որ իր նկատմամբ, Ռուսաստանում խարդախության փաստով հարուցված քրեական գործով, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց է ընտրվել: Նշված հանգամանքը խոսում է այն մասին, որ.

- Կ-ն, իր գիտակցմամբ, կաշառք է տվել իր համար անօրինական արարք կատարելու համար՝ համոզված լինելով, որ այլապես կալանքն անխուսափելի է՝ թեև, նույն հանգամանքներում, բնականաբար կարող էր ակնկալել այլ՝ ավելի մեղմ որոշում,

- Հ-ն, տվյալ դեպքում, հանդես է եկել «կարծեցյալ» իրավասու պաշտոնատար անձի դերում և խաբեությամբ՝ գործի իրական հանգամանքները թաքցնելով, գումար պահանջել:

Հարկ է նշել, որ, երբ պաշտոնատար անձը կաշառք է պահանջում անօրինական գործողություններ կատարելու համար, օրինակ՝ համապատասխան հիմքերի բացակայության դեպքում, քրեական գործը կարճելու համար, ապա չի կարելի այդպիսի արարքը ճանաչել կաշառքի շորթում:

Իրավաբանական գրականության մեջ կաշառքի շորթման հասկացության առումով միասնականություն չկա: Ռուսական գիտնականների մեծ մասը պաշտպանում են ՌԴ գերագույն դատարանի պլենումի վերոհիշյալ որոշման մեջ շորթման սահմանումը՝ համարելով այն միանշանակ ճիշտ<sup>4</sup>:

Մյուս կողմից, մի շարք հեղինակներ գտնում են, որ անհրաժեշտ է կաշառքի շորթման հասկացությանը տալ առավել լայն մեկնաբանություն՝ առաջարկելով հետևյալ սահմանումը՝ դա պահանջ է պաշտոնատար անձի կողմից տալ իրեն կաշառք՝ կաշառատուի համար որևէ ոչ շահեկան արարք կատարելու սպառնալիքով, անկախ նրանից, թե կաշառատուի շահերը օրենքով պահպանվող են, թե՛ ոչ<sup>5</sup>:

Սակայն նման մեկնաբանությունը, կարծում են, ճիշտ չէ: Այն նաև հակասում է «շորթման» տերմինի ընդհանուր հասկացությանը: Բացի այդ, նման մոտեցումը արդյունքում կրերի քրեական օրենքով նախատեսված կաշառք տալու համար քրեական պատասխանատվությունից ազատման խրախուսական նորմի անհարկի կիրառման դեպքերի:

Այսպիսով, պրակտիկայում հանդիպում են շորթման դեպքեր, երբ պաշտոնատար անձը, կաշառատուի օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիքով, կատարում է անօրինական գործողություններ: Նման արարքի որակման հար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցում ճիշտ կլինի առանձնացնել կաշառքի շորթումը և պաշտոնատար անձի կողմից անօրինական գործողություններ կատարելը, այսինքն արարքը որակել համակցությամբ 308-րդ և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նշենք, որ ՀՀ քրեական օրենսգիրքը ոչ իրավաչափ առավելության ոչ բոլոր պահանջներն է համարում շորթում: Հիշյալ օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ի մասի դիսպոզիցիայում միայն ոչ իրավաչափ առավելության պահանջը պաշտոնատար անձի կողմից ի օգուտ կաշառատուի կամ նրա ներկայացրած անձի գործողություն կատարելու կամ չկատարելու համար, համարվում է ավարտված հանցագործություն, ի դեպ գործողությունը կամ անգործությունը կարող է լինել, թե՛ ծառայողական լիազորությունների շրջանակում, թե՛ անօրինական: Այնուամենայնիվ, օրենքը որևէ տարբերական չափանիշ չի սահմանել: Ի վերջո պահանջն իր բովանդակությամբ կարող է առաջարկի ձևով հնչել կամ տարբեր անհատակ ձևերով:

Քննարկենք հասարակ կաշառքի և կաշառքի շորթման հանցակազմերի առանձնահատկությունները: Կաշառքի շորթումը, ի տարբերություն առաջինի, պետական իշխանության հեղինակության հետ մեկտեղ ոսնձգում է նաև մարդու իրավունքներին և օրինական շահերին: Միևնույն ժամանակ, շորթման պարագայում պաշտոնատար անձը, փաստացի, ոչ իրավաչափ առավելություն տրամադրողին ի վնաս գործողություն կամ անգործություն է կատարում՝ արդյունքում նրան պատճառելով վնաս: Անձը, ի տարբերություն ավանդական կաշառակերության, ոչ իրավաչափ առավելությունը ստիպված է տրամադրում, քանի որ խնդիր ունի կանխելու իր իրավունքների և օրինական շահերի խախտումը կամ խախտման վտանգը: Շորթման դեպքում կատարվող գործողությունները գրեթե միշտ անօրինական են. կաշառքի ստացման համար նախաձեռնությունը միշտ պաշտոնատար անձինն է, «կաշառատուն» գործում է ճնշումների տակ, այս արարքը չի կրում գործարքային բնույթ ինչպես դա լինում է հասարակ կաշառքի ստացման դեպքում:

Վերոգրյալից ելնելով՝ հարց է ծագում. «արդյո՞ք կաշառքի շորթումը կարող է տեղավորվել կաշառակերության հասկացության շրջանակում»: Այս հարցին միանշանակ պատասխանելը դժվար է, սակայն, կարծում ենք, որ քրեական օրենքի արդարության սկզբունքներից ելնելով՝ նպատակահարմար է տարբերակված մոտեցում դրսևորել կաշառքի շորթման և կաշառակերության հասկացությունների միջև՝ նախատեսելով դրանց համար

պատասխանատվության տարբեր սկզբունքներ: Կաշառքի շորթումը նույնպես պետք է դիտել որպես կոռուպցիոն հանցագործություն: Այն հանրության համար առավել բարձր վտանգավորություն ունի, ուստի և պատժողական քաղաքականության առումով առավել խիստ մոտեցում է պետք ձևավորել: Այս հանցագործության դեպքում ոչ իրավաչափ առավելություն տրամադրողը ոչ թե արհեստականորեն պետք է հանդես գա «կաշառատու»՝ հանցագործություն կատարող անձ, իսկ հետո քրեական օրենքի համապատասխան խրախուսական նորմի կիրառմամբ լուծվի նրան պատասխանատվությունից ազատելու հարցը, այլ ֆիզիկական անձ, որին հանցագործությամբ գույքային կամ ոչ գույքային վնաս է պատճառվել: Մրանով հենց ինքնըստինքյան և իրավաչափորեն կլուծվի կաշառքի շորթման դեպքերով ոչ իրավաչափ առավելություն տրամադրողին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրը, այն տեսանկյունից, որ այդպիսի հարց այլևս չի առաջանա, քանի որ կոնկրետ հանցագործության դեպքով տվյալ անձը հանդես կգա որպես տուժող:

Կաշառքի շորթման դեպքերով տուժողը պետք է գիտակցի, որ համապատասխան պահանջներկայացնող պաշտոնատար անձին ոչ իրավաչափ առավելություն է տրամադրում՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Եթե անձը չի գիտակցել, որ իր նկատմամբ պաշտոնատար անձի կողմից շորթմամբ կաշառք է պահանջվել, այլ խաբեության կամ մոլորության կամ չիմացության արդյունքում վստահ է եղել, որ, այնուամենայնիվ, ոչ իրավաչափ առավելություն է տրամադրում ի օգուտ իրեն կամ այլ անձի գործողություն կատարելու կամ չկատարելու դիմաց, հաստատ համոզված լինելով, որ այլապես օբյեկտիվորեն չէր կարող հավակնել դրան, ապա, այս դեպքում, նրա արարքում առկա է կաշառք տալու փորձի հանցակազմը, քանի որ առաջին՝ անձը գիտակցաբար ոսնձգություն է կատարել պետական ծառայության հեղինակության դեմ, երկրորդ՝ նրա համար ոչ իրավաչափ առավելություն ստացողը, կաշառակերության հասկացության առումով, վեր է ածվում «կարծեցյալ» պաշտոնատար անձի: Սակայն, կոնկրետ կատարած արարքի մասով նշյալ պաշտոնատար անձը պետք է պատասխանատվություն կրի կաշառքի շորթման համար:

Կաշառքի շորթումը պետք է ավարտված համարվի համապատասխան ոչ իրավաչափ առավելության տրամադրման պահանջի ներկայացման պահից, որը խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը կամ այնպիսի գործողություն-

www.lawinstitute.am

ների կատարումը, որոնք անձի առաջ դնում են այնպիսի անբարենպաստ պայմաններ, որի պարագայում նա ստիպված է կաշառք տալ՝ իր օրենքով պահպանվող շահերին հասցվող վնասակար հետևանքների առաջացումը կանխելու նպատակով:

Ահա այն հանգամանքները, որոնց ազդեցության ներքո գտնում ենք, որ կաշառքի շորթումը պետք է դուրս գա կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու հանցակազմերի շրջանակից և քրեական օրենքը լրացվի նոր հանցակազմով՝ «Կաշառքի շորթում» վերնագրամամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Կաշառքի շորթումը, այսինքն պաշտոնատար անձի կողմից ոչ իրավաչափ առավելություն տրամադրելու պահանջը այնպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու սպառնալիքով, որը կարող է վնաս պատճառել անձի իրավունքներին և օրինական շահերին կամ դիտավորյալ անձին առաջադրել այնպիսի պայմաններ, որի պարագայում նա ստիպված է ոչ իրավաչափ առավելություն տրամադրել իր իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումը կանխելու նպատակով. պատժվում է...»

<sup>1</sup> Տե՛ս Российское законодательство X-XX веков. Т.6. Законодательство первой половины XIX века. – М., 1988. – С. 276-395.

<sup>2</sup> Տե՛ս Դատական գործ N: ԿԳ-0071/01/09:

<sup>3</sup> Տե՛ս Դատական գործ N: ԵԱՆԳ-0104/01/09:

<sup>4</sup> Տե՛ս Волженкин Б.В. Постановление Пленума Верховного Суда РФ «О судебной практике по делам о взяточничестве и коммерческом подкупе»; достоинства и недостатки // Уголовное право. 2000. N4. С. 13; Клепицкий И.А., Рсчанов В.И. Указ.соч. С. 73; Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. М., 2000. С. 742; Динка В.И. Указ.соч. С. 281.

<sup>5</sup> Տե՛ս Светлов А.Я. Указ.соч. С. 218; Медведев А.М. Вымогательство взятки // Государство и право. 1996. N8. С. 100; Аникин А. Ответственность за взяточничество по новому УК // Законность. 1997. N6. С. 33; Шнитенков А.В. Отягчающие обстоятельства в преступлениях против государственной власти, интересов государственной службы и службы в органах местного самоуправления: Дис.канд.юрид.наук. Омск, 1998. С. 106; Эксанова А.А. Указ.соч. С. 27; Семенов Д.А. Указ.соч. С. 154.

РЕЗЮМЕ

*Особенности уголовной ответственности за вымогательство взятки*

Научная статья посвящена проблемам, связанным с уголовной ответственностью за вымогательство взятки в Республики Армения.

Определяя вымогательство взятки к числу наиболее опасных коррупционных преступлений, автор выражает озабоченность по поводу законодательной формулировки состава вымогательства взятки и практики по делам о вымогательстве взяток.

Автор проводит сравнительный анализ законодательств о вымогательстве взятки Царской Руси, Российской Федерации и Республики Армения, определяя наиболее приемлемые методы.

В результате проведенного исследования:

1. Автор определяет два метода вымогательства взятки должностным лицом: прямой и косвенный.
2. Высказывает мнение о том, что незаконные действия, совершенные должностным лицом с угрозой причинения ущерба законным интересам взяткодателя, должны квалифицироваться по совокупности – ст. 308 и п. 1 ч. 3 ст. 311 УК РА.
3. Предлагает дополнить Уголовный кодекс РА новым составом “Вымогательство взятки”, представляя соответствующее определение.

SUMMARY

*The peculiarities of criminal liability for bribery extortion*

The scientific article is devoted to the issues of criminal liability for bribery extortion in the Republic of Armenia. Classifying the extortion of bribe as one of the most dangerous crimes of corruptive nature, the author expresses his concern in respect to the legislative formulation of the bribery extortion crime and the practice of the bribery extortion cases.

The author subjects the legislatures on bribe extortion of the Tsarist Russia, the Russian Federation and the Republic of Armenia to the comparative analysis revealing the more acceptable approaches.

As a result of relevant research:

1. The author separates two means of bribe extortion by the official- direct and indirect.
2. Expresses an opinion that it would be correct to qualify the illegal acts implemented by the official with the threat of damaging the legitimate interests of the bribe giver by the combination: article 308 and point 1 of part 3 of Article 311 of the Criminal Code of RA.
3. Proposes to add a new crime to the Criminal Code with a title of “Bribe extortion” presenting relevant definition.